

281.63  
7045/6  
1856  
9.1

Խ Ա Չ Ե Ի Գ Ա Ի Ա Չ Ա Ն

Ընծայաբերեալ առ Յարգոյ Արեւիքոն Տէր Յովհաննէս  
Խաչէեան՝ Աւագերէց Նաղարէեայ սուրբ Եկեղեցոյն շայնց  
ի կաշիւեալ յառաջ կէտէն ի 30 Դեկտեմբերի 1855:

Պրն Փ. Ա. Գեորգեանց՝ մին ի գործակալաց Եկեղեց-  
ւոյն յառաջ եկեալ ի յատենի ի ժամու սրբոյ Պատարագին՝  
նախ քան զշայր թե՛ն՝ ունելով ի ձեռին զԵրկուս կոնդական՝  
( Խաչն գոլով ի վերայ սեղանոյն և Գաւազանն ի բեմին )  
ասաց այսպէս. Այսօրիկ են կոնդակքն յիշատակեալք ի  
ճանուցեալն թղթի Պրն Եկեղեցպանին. Սքին՝ ևս և Տո-  
գևոր պարգևքն յիշատակեալք ի սոսին՝ յատուկ իմն նա-  
մակաւ առաքեցան առ Պարոն Եկեղեցպան մեր. և ես ըստ  
Տրամանի Սրբազան Առաջնորդին, որպէս և ըստ տնօրէ-  
նութի իմ և պաշտօնակից եղբարցս՝ իբրև մի ի պաշտօնա-  
տնարաց սբջ Եկեղեցւոյս՝ յանձնառու եղէ ընթեռնուլ զկոն-  
դական և կատարել զՏարկաւորն ըստ պատշաճին. Ասան-  
որոյ և խնդրեմ՝ ի ձեռն զուսկնդրութի:

Չկնի այսօրիկ ել նա ի բեմն. և Դպիրքն սկսան եր-  
գել զԵջ Մեծէն ի Չօրէ՛ և այլն. և ապա ընթերցեալ եղեն  
կոնդակքն. որոյ իսկական օրինակքն են Տետագայք:



Ե  
Ներսէս Եղիսէայանստեա և կաթողիկոս աթենայն շայնց.  
ՌՄՂԲ. 1843.

Ներսէս ծառայ Քսի և անՏասանելի կամօքն Աստու-  
ծոյ Եպիսկոպոսապետ և կաթողիկոս ամ շայոյ՝ ծայրա-  
գոյն Պատրիարգ Տամազգական նախամեծար ամթողոյ Արարա-  
տեան մայր Եկեղեցւոյ սբջ կաթողիկէ Էջմիածնի. Ընոր-

Տունակ Տէր Յովհաննէս Աւագ քահանայ Խաչկեան: Սրբազան Թաղդէոս եպիսկոպոս վիճակաւորն Հայոց Պարսկաստանի և Հնդկաստանի վիճակեցելոյ սրբոյ Ամենաիրկշի վանայ նոր Զուղայի գրելով զՉատագուլութի վասն ձեր քահանայական կոչման արժանաւորութեց և հաւատարմութեց սրբոյ եկեղեցւոյ և ազգի խնդրեալ էր վասն ձեր Խաչ քահանայական: Պատուելով զվկայութի Սրբազան վիճակաւորին ձերոյ վասն ձեր քահանայական արժանաւորութեանց պարգևեմք ձեզ զոսկեզօծ Խաչ լանջական կրել 'ի պարանոցի 'ի նշանակ ձերոց արժանաւորութեց և Տեմք բարեմաղթ առ Աճ, զի ըստ ամենաբաւական ողորմութե իւրում հանդիսայուսցե զամ քահանայս Հայոց 'ի հաւատարմ ապասաւորութե տաճարի փառաց սբ Աճութե իւրոյ և ամենապատուական արեամք Քսի գնեալ ժողովրդեան Հայկազանց, յամի ազգական 1303 և փրկչական 1854 'ի Հոկտեմբերի 19: 'ի Թիֆլիզ:

(2 եռն' .) Կաթուղիկոս ամ Հայոց ՆԵՐՍԷՍ: ..

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն:

Տամք զայս վկայական գիր Արժանապատիւ Տէր Յովհաննէս Խաչայասակ Աւագ քահանայի Խաչկեան փոխանորդի մերոյ 'ի վիճակին Հնդկաստանի, առ այն զի արժանաւոր գործք բազմալաստակ աշխատասիրութեց նր, թէ 'ի պաշտօնի իւրում հոգևորականութե' թէ 'ի բարեկարգ կառավարութեց մերոյ առ ինքն յանձն եղեալ գործոյ' և թէ 'ի բարեջանութե մասին յօգուտ եկեղեցւոյ իւրոյ և հայրենեաց, առ ի թ եղեն մեզ վարձատրելոյ գնա. վասն որոյ 'ի ձեռն Սրբակրօն Տէր Յարութի քահանայի Տէր Ստեփաննատեան' վիճակաւորի կալիաթոյ առաքեմք վս նր զի Գաւազան արանոս փայտեայ ոսկեզօծ գլխով յոյր վերայ գրեալն է Պարգև քաջ հովուուէ, 'ի վայելս Տր Յովհաննու Խաչակիք

Աւագ քահանային կրել զայն 'ի ձեռս իւր մինչ լինի քա-  
 ըողասայ և մինչ 'ի նշան պատուոյ և արժանաւորութեանն  
 իւրոյ Տաճեացի ունիլ զայն 'ի ձեռին իւրում արտաքոյ Ե-  
 կեղեցւոյ զի արժանի է քաջ Տոլուուի նորա այսմիկ արտո-  
 նութէն 'ի Ջուղայ Աննաիւրկչեան սք Անուս 'ի տասն և  
 ութ Ապրիլի յամի Փրկչական Տաղար ութ Տարիւր յիսուն և  
 Տինգ և մեր ազգական Տաղար երեք Տարիւր և չորս :

ԸնորՏիւ նորին կայսերական մեծութէն ինքնակալին ամ  
 Ռուսայ և այլոյ և այլոյ սրբոյն Աննայի երկրորդ Թագա-  
 զարդ աստիճանի նշանակիր և Ասպետ ( Չեռն' ) Պարս-  
 կաստանի և Հնդկաստանի Հայոց :

Եղիսկուպոս ԹԱԴԴԵՈՍ :

•• Չկնի ընթերցման կոնդակայն ընթերցողն առեալ  
 զԽաչն 'ի ձեռին' ասաց այսպէս առ ժողովուրդսն : Այս  
 Խաչ նուէր վեճապատիւ կաթուղիկոսին՝ ոչ վասն զարդու-  
 է և ոչ վասն մարմնաւոր փառաց, այլ յիշատակ այնր սուրբ  
 Խաչին՝ յորոյ վերայ Փրկիչն մեր բնեռեցաւ և է շնորհ և  
 պարգև իմն Տոգևոր՝ զոր Սրբակրօն Աւագ քահանայ մեր ունի  
 կրել 'ի պարանոցի իւրում ըստ զօրութէն կոնդակին :

Ապա ակնարկեալ 'ի Գաւազանն' դարձեալ ասաց : Գաւա-  
 զանա այս է նուէր իմն 'ի Սրբազան Աւաջնորդէն, զորոյ  
 զգործածութենէն արդէն լիով տեղեկացայք 'ի կոնդակէ նո-  
 րին : Արդ Տրամանաւ և պատուիրանաւ նոցա և Թոյլտուութե  
 ձերով յառաջ մատչիմ զՏոգևոր պարգևս զայսոսիկ մա-  
 տուցանել Յարգոյ Սրբակրօն Աւագ քահանայի մերում :

Թողեալ զԽաչն 'ի վր սեղանոյ' և զԳաւազանն 'ի բե-  
 մին, և ապա գնացեալ դէպ առ Սրբակրօն Աւագերէցն՝ ա-  
 սաց ցնա այսպէս : Արժանապատիւ Տէր Յովհաննէս՝ գերա-  
 պայծառ վեճապատիւ կաթուղիկոսի և սրբազան Աւաջնոր-

զի Կոնդակքն՝ զոր այժմ ընթերցաք ՚ի լռել ժողովորդեան՝  
 ծանուցին քեզ լիով զՏոգևոր սեր՝ զՇնորհ և զպատիւ՝ զոր  
 ունին նոքա առ քեզ։ Արդ մեայ ինձ միայն ասել քեզ՝ Արքա-  
 կրօն Տէր՝ զի դու յայսմ աւուր պարտիս յոյժ բարեբազդ և  
 մխիթար համարիլ զքեզ՝ գոլով արժանայեալ այսպիսի  
 հանդիսաւոր ընծայաբերուէ ծայրագոյն Տոգևոր պարգևացս  
 այսոցիկ՝ որոց և իսկայէս և բոլորովին ետդ արժանի։ Եւ  
 ես ՚ի դիմաց իմ և պաշտօնակից եղբարցս՝ նոյնպէս և ՚ի  
 դիմաց պատուելի քահանայից և ժողովորդականաց աստ ներ-  
 կայ եղելոց (քանզի հաւաստի եմ զի ամենեքեան նոքա Տո-  
 գևոր սիրով միաբանին ընդ իս) և ՚ի կողմանէ բոլորեցունց  
 ասեմ՝ Արքակրօն Տէր՝ մեք ՚ի սրտէ ուրախ եմք ընդ այս ար-  
 ժանաւայել ընծայաբերուի։ Գոհանամք զբարերար Տեառ-  
 նէ և շնորհակալ եմք զվեհափառ Կաթողիկոսէն և զԱրք-  
 բազան Առաջնորդէն մերոյ՝ զի արժանայաք մեք տեսանել  
 զԱրքակրօն Աւագ Քահանայ մեր այսօր պատուեալ և մեծա-  
 րեալ այսպիսեօք ծայրագոյն Տոգևոր պարգևօք։ Եւ արդ  
 Արքակրօն Տր՝ հրամանաւ և պատուիրանաւ վեհափառ Կա-  
 թողիկոսին և Արքազան Առաջնորդին մերոյ՝ և ՚ի դիմաց  
 նոց խնդրեմ ՚ի քէն յառաջ մատչիլ և ընդունիլ զՏոգևոր  
 պարգևսն՝ զորս ինձ վիճակեցաւ այսօր հրաւիրել քեզ ամ  
 բարեհաճութեք։ Ապա արկեալ զխաչն ՚ի պարանոց նր ձե-  
 ուամք Արքակրօն Տէր՝ Մկրտչին Յ. Տէր Ղուկասեան՝ պա-  
 տարագարար քահանայինս և զԳաւազանն հանդերձ Կոնդա-  
 կօքն ձեռամբ իւրով տուեալ նմա՝ ասաց զնա այսպէս.  
 Ընորհաւորեմք քեզ մեք ամենեքեան՝ Արքակրօն Տէր՝ զըն-  
 ծայաբերութի Տոգևոր պարգևացս այսոցիկ. և ցանկամք  
 քեզ վայելիլ զայնս զամս բազումս հանդերձ ամ Տոգևորա-  
 կան մխիթարութեք։

Յարգոյ Արքակրօն Տէր Յովհաննէս Խաչկեան՝ Աւագ  
 քահանայ մեր ընկալեալ մեծարանօք զպարգևսն՝ և կանգ-  
 նեալ առաջի սբյ Տաճարին՝ արտասուալից աչօք նախ գո-  
 հութի և փառաբանութի մատոյց ամենողորմ Պարգևա-  
 տուին ամ բարեաց վասն քաղցր և անձառելի ողորմութե  
 իւրոյ՝ և ապա դարձուցեալ զերեսս իւր առ ժողովորդն՝

բարեպատշաճ բանիւք գոհացաւ զգերապայծառ վե՛հ հո-  
 վուպետէն՝ զկաթուղիկոսէն իմ հայոց՝ որոյ հանրածանօթ  
 գովութիւն հռչակեալ է իմ ուրեք և ո՛չ կարօտի նկարա-  
 գրութե՛ք գրչի՛ նոյնպէս և զգերապատիւ Արքազան Առաջնոր-  
 դէ մերմէ՛ որ իբրև զհովիւ քաջ և անքուն տքնի՛ աշխատ  
 լինի և ո՛չ դադարի զփոքրիկ հօտ իւր կրթել ՚ի բարին և  
 յառաջացուցանել յուսումն աստուածգիտութե՛ք ՚ի վայրի դա-  
 լարով անդ զոչխարսն բնակեցուցանելով և ՚ի ջուրս հանգս-  
 տեան զգառինսն սնուցանելով։ Ընորհակալ եղև զԵկեղեց-  
 պանէն և զգործակալաց Եկեղեցւոյն՝ մանաւանդ զՊրն Փ.  
 Ա. Գեորգեանց վս սիրոյն՝ որով աշխատեցաւ նա ՚ի հանդի-  
 սի այսր ընծայաբերութե՛ք այսպիսի իմն վայելուչ ձևով և  
 բարեյարմար եղանակաւ։

Հուսկ իմի շնորհակալ եղև զժողովրդոց իւրոց և  
 ՚ի սրտէ օրհնեաց զնոսա լիաբերան՝ յայտնելով զսեռն երախ-  
 տագիտութի իւր առ նս և ապելով՝ զի եթէ ո՛չ էր Արքազան  
 Առաջնորդին կարգեալ զնա վիճակաւոր նց և աւագ Բա-  
 հանայ այսր Եկեղեցւոյ՝ թերևս ո՛չ ունէր ինքն ընդունիլ  
 զայսպիսի ընծայաբերութե՛ք պատիւ. որում արժանապաւ այսօր  
 ո՛չ վասն իւրոց ինչ անձնաւոր արժանեաց և կամ արդեանց՝  
 յորոց բոլորովին թափուր գոլ խոստովանի զանձն իւր՝ այլ  
 վասն սիրոյ և երախտեաց ժողովրդեան իւրոյ՝ և առաւելա-  
 պէս ՚ի մանաւոր ձրիատուր շնորհաց երկոցունց հայրենա-  
 սէր պարգևատու Դիտապետացն՝ վեհափառ կաթուղիկո-  
 սին և գերապատիւ Առաջնորդին. քանզի պատիւն է ՚ի պատ-  
 ուօղն և ո՛չ ՚ի պատուէալն որպէս ասէ իմաստասէրն բա-  
 րոյախօս։

ԱՒԱՐՏ։



Տպագրեալ է կաշիւով, ՚ի Տպարանի Հայկեան Մարդտոն-  
 րանի շէմքանի, ՚ի 10 Յունուարի, 1856։